

Հաստատվել է

Մասնաճյուղի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2019թ. նոյեմբերի 26-ի թիվ 3 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝



Ռ. Միրզախանյան

Կ Ա Ր Գ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մագիստրոսական թեզը ՀՊՄՀ-ի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի մասնագրով սահմանված, ՀՊՄՀ-ի մագիստրոսի մասնագիտական խնդիրներն ու առաջադրանքները կատարելու տեսական և գործնական պատրաստվածության գնահատման հիմնական չափանիշ է և համալսարանում կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատական:
2. ՀՊՄՀ-ում մագիստրոսական թեզն ազգային որակավորումների շրջանակի պահանջներին համապատասխան ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության համալիր աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտության վերջնարդյունքներով ուսանողի ձեռք բերած խորը մասնագիտական գիտելիքները հետազոտության մեջ կիրառելու, ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, գիտական խնդիրները հետազոտելու և ստեղծագործական ինքնուրույն լուծումներ առաջարկելու հմտությունները:
3. Մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը հիմնարար պահանջ է յուրաքանչյուր մագիստրոսի համար, անհատական ամփոփիչ բաղադրիչ, որը որոշված է համալսարանում իրականացվող համապատասխան ուղղության մասնագիտական կրթության մասնագրով:
4. Մագիստրոսական թեզի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի և ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները և սահմանվում են սույն կարգով:
5. Մագիստրոսական թեզի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում են ֆակուլտետների խորհուրդները՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մագիստրոսական թեզի իրագործման ընթացքում մագիստրոսին առաջադրված պահանջներին համապատասխան որոշվում են հետևյալ նպատակները՝

- ստացած տեսական նաև գործնական գիտելիքների համակարգում,
- թեմայի շրջանակում գիտելիքների գործնականում կիրառելու հմտությունների ցուցաբերում /մասնագիտական խնդիրները լուծելիս/ ,
- տեսական և փորձարարական որոշումներ ընդունելու կարողության դրսևորում,
- տեսական, փորձարարական հետազոտությունների մշակում, վերլուծություն և համակարգում, նրանց գործնական նշանակության և կիրառման հնարավոր ոլորտի գնահատում,
- թեմային առնչվող քանակական ու որակական տվյալների խորը վերլուծություն կատարելու, և ստացված տեղեկատվության պայմաններում համապատասխան եզրահանգումներ կատարելու կարողություն,
- մասնագիտական շրջանակներում սեփական գործունեության արդյունքների հրապարակային ներկայացման կարողություն:

1. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մագիստրոսական թեզի իրագործման ընթացքում, մագիստրոսին առաջադրված պահանջներին համապատասխան որոշվում են հետևյալ մի քանի խնդիրները`

- ըստ թեմայի` համակարգվում և վերլուծվում է տեսական նյութը,
- որոշվում են հետազոտության օբյեկտն ու մեթոդները,
- իրականացվում է էլակետային տվյալների հայթայթումը, որոնք անհրաժեշտ են տվյալ հետազոտության թեման վերլուծելու համար,
- կատարվում է հավաքված գրականության, տեղեկությունների վերլուծություն, և այդ վերլուծությունների արդյունքներից էլնելով` ձևավորվում են որոշումներ,
- կատարվում են տեսական և փորձարարական հետազոտություններ,
- իրականացվում է տեսական նյութի մշակում,
- տեսականի և փորձարարական հետազոտություններ հիման վրա մշակվում և շարադրվում է գործնական մոտեցումները:

Թեզի պատրաստման և պաշտպանության գործընթացում մագիստրոսը պետք է ցուցաբերի`

- ինքնուրույն ստեղծագործական մտածելակերպ,
- աշխատանքի ընթացքում կատարվող հետազոտությունների մեթոդների և մեթոդիկաների տիրապետում,
- ձեռքբերված արդյունքների գիտական վերլուծության, աշխատանքի ընթացքում ստացված (պաշտպանվող) եզրակացությունների և դրույթների մշակման ընդունակություն,
- գործնական և գիտական գործունեության մեջ ստացված արդյունքների օգտագործման հնարավորությունները գնահատելու կարողություն:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Մագիստրոսական թեզերի թեմաներն առաջադրում են տվյալ կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կամ ամբիոնների դասախոսները: Թեմաների վերջնական ցանկը հաստատվում է ամբիոնի նիստում կամ ամբիոնների համատեղ նիստում, եթե տվյալ կրթական ծրագիրն իրականացնում են մեկից ավելի ամբիոններ: Ուսանողը կարող է առաջարկել թեմա` դրա նպատակահարմարության հիմնավորմամբ: Ընդ որում թեմաները հաստատվում են միայն համապատասխան ղեկավար

ապահովելու դեպքում:

2. Մագիստրոսական թեզի թեման պետք է բխի տվյալ մասնագիտական ոլորտի հիմնախնդիրներից, բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

3. Մագիստրոսական թեզերի թեմաների ցանկն ուսանողներին առաջարկվում է առկա մագիստրատուրայի 1-ին կիսամյակի ավարտին և հեռակա մագիստրատուրայի երկրորդ կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: Առաջարկվող թեմաների քանակն առնվազն 10 տոկոսով պետք է գերազանցի մագիստրոսական թեզ կատարողների թվին և չկրկնի նախորդ տարիների թեմաները: Ղեկավարի կողմից առաջադրված և ամբիոնի կողմից քննարկված մագիստրոսական թեզի թեման կարող է ենթարկվել մասնակի փոփոխության՝ ուսանողի առաջարկությամբ, ղեկավարի համաձայնությամբ և ամբիոնի որոշմամբ, մինչև ֆակուլտետային խորհրդի հաստատումը:

4. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրության համար ուսանողը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին (տե՛ս հավելված 1):

5. Ընտրված թեմաների ցանկը (ըստ ուսանողների և թեզի ղեկավարների) նախ հաստատվում է ամբիոնի, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի նիստերում:

6. Մագիստրոսական թեզի թեմայի մասնակի վերաձևակերպում հնարավոր է մասնագիտական ամբիոնի որոշմամբ՝ մինչև նախապաշտպանության կազմակերպումը:

7. Թեմաների հաստատված ցանկերի մեկական օրինակ պահվում է ամբիոնում, ղեկանատում և Ուսանողական ակադեմիական հետազոծի (շարժի) կազմակերպման բաժնում:

8. Առկա և հեռակա ուսուցման՝ նախորդ տարիներին ուսուցումը ձախողած ուսանողները պաշտպանության թույլտվության իրավունք /թեմայի ընտրություն և ղեկավարի նշանակում՝ հնի պահպանում կամ նորի հաստատում/ ձեռք են բերում տվյալ ուսումնական տարվա առաջին ամսվա ընթացքում՝ համալսարանի ռեկտորին դիմելու և համապատասխան վճարումներ կատարելու դեպքում:

5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Մագիստրոսական թեզը պետք է ունենա տեսական, վերլուծական, հետազոտական և գործնական բաղադրիչներ, լինի ավարտուն հետազոտություն՝ փաստելով հեղինակի մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Այն պետք է ունենա առաջադրված նպատակներին և խնդիրներին համապատասխան կառուցվածք:

2. Մագիստրոսական թեզի կառուցվածքի հիմնական տարրերն են՝

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը աշխատանքի սահմանված կարգով լրացված առաջին էջն է, որն ունի տեղեկատվական բնույթ (տես՝ հավելված)

<p>Բովանդակություն</p>	<p>Տիտղոսաթերթին հաջորդում է բովանդակությունը, որտեղ արտացոլվում են աշխատանքի բոլոր բաժինները, այդ թվում՝ գրականության ցանկը և հավելվածները: Բովանդակությունում նշվում են բաժինների սկսվող էջերը: Բովանդակության վերնագրերը պետք է կրկնեն տեքստի վերնագրերը:</p>
<p>Ներածություն¹</p>	<p>Ներածությունում հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը դրա տեսական և գործնական կարևորությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակները և ներկայացվում են դրանց հասնելու և լուծման ենթակա խնդիրները, նշվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության ընտրված մեթոդը (մեթոդները), ստացված արդյունքների տեսական, գործնական ու կիրառական նշանակությունը և աշխատանքի կառուցվածքը:</p>
<p>Հիմնական մաս</p>	<p>Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Գլուխներից առաջինը սովորաբար ունենում է տեսական բնույթ, իսկ մյուսները՝ վերլուծական և կիրառական: Գլուխները ներառում են օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը, մեկնաբանություններ և ամփոփում:</p>
<p>Եզրակացություններ (և առաջարկություններ)</p>	<p>Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի նշանակալի արդյունքները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ: Եզրակացությունները և առաջարկությունները հետազոտությունից ստացված արդյունքներից ուղղակի մեջբերումներ են, այլ դրանց սինթեզված ամփոփում, որը կատարված աշխատանքի ընդհանրացված գնահատականն է: ոչ թե կատար</p>
<p>Օգտագործված գրականության ցանկ</p>	<p>Ներկայացվում է օգտագործված գրականության ցանկը, որի առնվազն 70 տոկոսը պետք է արտացոլված լինի աշխատանքում:</p>
<p>Հավելվածներ</p>	<p>Առկայության դեպքում կցվում են թեզին:</p>

3. Աշխատանքը հրապարակային պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, թղթային կազմված և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից, վերևից և ներքևից՝ 2.0 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է Unicode կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ՝ հայերեն տեքստերի դեպքում՝ GHEA Grapalat, իսկ ռուսերեն և անգլերեն տեքստերի դեպքում՝ Times New Roman: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), մեջտեղից և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից, իսկ

¹ • Ցանկալի է ներածական մասում ավելացնել տեղեկատվություն հրապարակումների կամ հնարավոր մասնագիտական քննարկումների/զիտաժողովներ/ վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են:

ենթագլուխները կարող են շարունակվեն նույն էջում: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1ամ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ աջ կողմից: Համարակալումը սկսվում է առաջին էջից, որի վրա առաջին էջը չի դրվում:

4. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

5. Գրականության ցանկում ներկայացվում է հայերեն գրականությունը՝ ըստ հեղինակների ազգանվան այբբենական հերթականության, հաջորդիվ օտարալեզու գրականությունը՝ նույն տրամաբանությամբ: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Նույն հեղինակի աշխատանքները դասավորվում են ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության: Գրականության ցանկում գրվում է աշխատանքի լրիվ անվանումը, դրվում է բաժանիչ՝ // նշանը, նշվում է հրատարակչությունը, հրատարակման տեղը, տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, ... // URL: <http://www.info...>, 14.06.2016):

6. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [9, էջ 15-19]), կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը (Օրինակ՝ Ա. Պետրոսյան, 2019), կամ տողատակում:

6. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մագիստրոսական թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ՀՊՄՀ առկա ուսուցման համակարգի համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն (տե՛ս Աղյուսակը ստորև): Հեռակա ուսուցման համակարգում յուրաքանչյուր գործողություն իրականացվում է աղյուսակում ներկայացված վերջնաժամկետից մեկ կիսամյակ ուշ:

Գործողություն	Վերջնաժամկետ
Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում, գիտական ղեկավարի նշանակում և հրամանագրում	1-ին կիսամյակի ավարտ
Թեզի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (Ժամանակացույցի) կազմում, հետազոտության պլանի մշակում,	2-րդ կիսամյակի ավարտ

<p>հետազոտության մեթոդների ընտրություն, գրականության վերլուծություն/մշակում և ներկայացում ուսումնական ստորաբաժանում ատեստավորման համար</p>	
<p>Թեզի հետազոտական մասի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի քննարկում և հաղորդում հետազոտական աշխատանք կիսամյակի ընթացքում բաղադրիչում, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում</p>	<p>3-րդ կիսամյակի ավարտ</p>
<p>Հետազոտության արդյունքների ամփոփում, թեզի հանձնում՝ ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանում</p>	<p>4-րդ կիսամյակ, Պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ</p>
<p>Գիտական ղեկավարի կարծիքի ներկայացում, թեզի նախապաշտպանություն, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում ուսումնական ստորաբաժանում մեկ շաբաթվա ընթացքում:</p>	<p>4-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 25 օր առաջ</p>
<p>Մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում</p>	<p>4-րդ կիսամյակ, գրախոսականի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանություն առնվազն 3 օր առաջ</p>
<p>Թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում:</p>	<p>4-րդ կիսամյակի ավարտ</p>

2. Մագիստրոսական թեզի կատարումը բաժանվում է մի քանի փուլերի՝

- նախապատրաստական,
- կատարողական,
- ձևակերպման,
- գրախոսություն և աշխատանքի նախնական պաշտպանություն,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

3. Մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

Ղեկավարը հաստատում է ուսանողի հետ համատեղ աշխատանքի կարգն ու ժամանակացույցը, ավարտուն աշխատանքը ներկայացնելու, նախնական և հրապարակային պաշտպանություն կազմակերպելու ժամկետները:

ա/ Մագիստրոսական թեզի պատրաստման ընթացքում ղեկավարը

պարտավոր է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- թեմայի շրջանակներում ուսանողին ուղղորդել անհրաժեշտ մասնագիտական գրականության և տվյալների աղբյուրների ընտրության հարցերում,
- պարբերաբար և համակարգված խորհուրդներ տալ ուսանողին և վերահսկել նրա կատարած աշխատանքները,
- գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին (ինչպես մաս-մաս, այնպես էլ որպես մեկ ամբողջություն),
- գրավոր կարծիք տալ թեզը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում գեկույցի նախապատրաստման ընթացքում ուսանողին տրամադրել խորհրդատվություն:

բ/ Ուսանողի և իր կատարած աշխատանքների ընթացքի, այդ թվում՝ ժամանակացույցի պահպանման վերաբերյալ ղեկավարը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում ամբիոնի նիստերում:

գ/ Ղեկավարը ներկայացնում է գրավոր կարծիք (1-2 տպագիր էջ), որտեղ նշվում է կատարված աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի պահանջներին, հակիրճ ներկայացնում է թեզի կառուցվածքն ու բովանդակությունը, դրա արդիականությունը, տեսական մակարդակն ու գործնական կարևորությունը, առաջադրված խնդիրների լուծման խորությունն ու յուրահատկությունը, կատարված աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, գրականության օգտագործման աստիճանը, ինչպես նաև տալիս է եզրկացություն՝ հրապարակային պաշտպանությանը թեզի պատրաստ լինելու | կամ չլինելու վերաբերյալ:

դ/ Մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի բացասական կարծիքի դեպքում թեզը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:

ե/ Ղեկավարը պատասխանատվություն է կրում սահմանված ժամկետում և սույն մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան մագիստրոսական թեզ ներկայացնելու համար:

4. Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունն իրականացվում է մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանումում (ամբիոնների ընդլայնվախ և կամ միջամբիոնային նիստերում)՝ ստորաբաժանման և մագիստրոսական ծրագրի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի գիտական ղեկավարի մասնակցությամբ:

ա/ Մագիստրոսական թեզը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության՝

Եթե ամբիոնը նիստի ընթացքում աշխատանքում հայտնաբերվում են գրագողության դեպքեր (աշխատանքում այլ աղբյուրներից առանց հղման, զգալի չափով օգտագործված ցանկացած նյութ (տեքստ) և այլն),

բ/ Նախապաշտպանությունը դրական եզրակացությամբ անցնելու դեպքում աշխատանքին նշանակվում է գրախոս:

5. Մագիստրոսական թեզի գրախոսումը և գրախոսի գործառույթները .

ա/ Մագիստրոսական թեզը գրախոսության տրվում է ոչ ուշ, քան ատենախոսության պաշտպանությունից 20 օր առաջ: Թեզի գրախոսը պարտավոր է գրախոսական կարծիքը ներկայացնել ատենախոսությունը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

բ/ Գրախոս կարող են լինել մասնագիտության դասիչին համապատասխան այլ բուհերի ամբիոնների, գիտական կազմակերպությունների դասախոսներ, գիտական հետազոտողներ, մասնագետներ:

գ/Մագիստրոսական թեզի գրախոսը, որպես կանոն, պետք է ունենա գիտական աստիճան:

դ/ Գրախոսների կազմը հաստատվում է ամբիոնի վարիչի կողմից:Ամբիոնը պատասխանատու է գրախոսման գործընթացի անկողմնակալ, թափանցիկ և օբյեկտիվ իրականացման համար:

ե/ Բացասական գրախոսության դեպքում ամբիոնի վարիչը պարզաբանում է խնդիրը գրախոսի, որակավորվողի և նրա ղեկավարի հետ, հաշվի է առնում նրանց կարծիքը, ընդունում որոշում պաշտպանությանը թույլատրելու մասին:

զ/ Մագիստրոսական թեզի գրախոսի բացասական կարծիքը, եթե մագիստրոսը համաձայն չէ դրա հետ, չի խոչընդոտում պաշտպանությանը:

6. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպումը.

ա/Մագիստրոսական թեզի պաշտպանության նպատակը մասնագիտական խնդիրներ լուծելու գործում շրջանավարտի պատրաստվածության մակարդակի որոշումն է համաձայն ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի և մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքների պահանջների:

բ/Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

գ/ Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի:

7. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է ՀՀ ՈԱՇ-ի 7-րդ մակարդակում սահմանված գիտելիքի, կարողության, հմտության նկարագրիչներին և ՄԿԾ-ի վերջնարդյունքներին (Աղյուսակում տե՛ս ՀՀ ՈԱՇ-ի համադրումը գնահատման չափանիշներին) համապատասխան չափանիշներով և չափորոշիչներով՝ 100 միավորանոց սանդղակով (Աղյուսակում տե՛ս գնահատման չափանիշներն ու չափորոշիչները և հատկացվող միավորները):

2. Մագիստրոսի գնահատման ամփոփիչ միավորը ձևավորվում է գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած միավորների միջինացմամբ: Ընդ որում ավարտական աշխատանքի արդիականության հիմնավորումը, գրականության վերլուծությունը /Գնահատման չափանիշ 1/ հետազոտության իրականացումը և արդյունքները /գնահատման չափանիշ2/ գնահատվում է գրախոսի կողմից, իսկ աշխատանքի շարադրումը, ձևավորումը, հրապարակային պաշտպանությունը, հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետումը/Գնահատման չափանիշ 3,4/ գնահատվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից:

3. Մագիստրոսի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները

հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ Մագիստրոսների ներկայությամբ:

	ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ	
Գնահատման չափանիշ	Չափորոշիչ	Սահմանված գնահատման միավորը
1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը	<p>1.1 Հետազոտությունը համապատասխանում է ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին՝ հիմնավորված ոլորտի հիմնարար և արդիական ձեռքբերումների խորը մասնագիտական գիտելիքների վրա:</p> <p>1.2 Ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, արդիականությունը:</p> <p>1.3 Թեմային անհրաժեշտ գրականության շրջանակում կատարված են առաջավոր մասնագիտական սկզբունքների ու մեթոդների իմացության վրա հենված վերլուծություն և ամփոփում, հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելիս՝ տարբեր ոլորտների գիտելիքը համակցելու և նոր գիտելիք ստեղծելու համար:</p>	Առավելագույնը 10
2. Հետազոտության իրականացումը և արդյունքները	<p>2.1 Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան:</p> <p>2.2 Ստացված արդյունքները հիմնավորված են և վկայում են մասնագիտական ոլորտի կոնկրետ հիմնախնդիրը հետազոտելու, արդիական գաղափարներ և մոտեցումներ առաջադրելու, հետազոտության թեմային համապատասխան տեսական և գործնական (կիրառական) տիրույթներում նորարարական մոտեցումների և ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտությունների առկայության վերաբերյալ:</p> <p>2.3 Կատարված է մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալների խորը</p>	Առավելագույնը 30

	<p>վերլուծություն, և ոչ ամբողջական/ սահմանափակ տեղեկատվության պայմաններում արված են համապատասխան եզրահանգումներ, ցուցաբերված է արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու և որոշումներ կայացնելու հմտություն: (նաև առաջարկություններ)</p>	
<p>3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը</p>	<p>3.1 Հետազոտությունը շարադրված է, հստակ ու գրագետ: Առկա է մասնագիտական խնդիրների բացահայտման և լուծումների առաջադրման տրամաբանված և ստեղծագործական մոտեցումներ:</p> <p>3.2 Հետազոտության գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը</p> <p>3.3 Հետազոտությունը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների SՏՏ-ներ կիրառելիությամբ:</p> <p>3.4 Հետազոտության առարկայի քննության հարցում ցուցաբերվել են քանակական և որակական հետազոտություններ իրականացնելու կարողություններ, որոնք արտացոլված են տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և սեփական մեկնաբանությունների տեսքով, որոնք աշխատանքում տեղ են գտել համապատասխան ընդհարացումների և եզրակացությունների ձևով:</p>	<p>Առավելագույնը 20</p>
<p>3. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը: Ենթային ընդհանուր գիտելիքների տիրապետումը</p>	<p>4.1 Չեկույցում հիմնավորվում են հետազոտության կապը ՄԿԾ-ին, ՈԱՇ-ի համապատասխան մակարդակին, ներկայացվում են արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և</p>	<p>Առավելագույնը 40</p>

<p>եզրակացությունները 4.2 Ձեկույցը հստակ է և հետևողական, կատարված աշխատանքի եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները զեկուցողը կարողանում է հստակ, համա-կարգված ու փոխկապակցված ձևով ներկայացնել մասնագիտական հանրությանը, հիմնավորել արդյունքները:/ Աշխատանքը պարունակում է մասնագիտական խնդիրների բացահայտման և նորարարական և/կամ այլընտրանքային լուծումների առաջադրման հիմնավորված և ստեղծագործական մոտեցումներ ենթադրող փաստացի հիմքեր: 4.3 Հարցերին և դիտողություններին զեկուցողը պատասխանում է հիմնավորված և սպառիչ 4.4 Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը:</p>	
---	--

8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

1. Մագիստրոսը մագիստրոսական թեզի գնահատման արդյունքների հրապարակումից հետո 1 ժամվա ընթացքում՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:
2. Բողոքարկումն ընդունվում և դիտարկվում է եթե անփոփոխ առեստավորման հանձնաժողովի կողմից առկա են ընթացակարգային խախտումներ:
3. Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:
4. Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի, տկյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և հաստատության ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են ռեկտորի կողմից,
5. Մագիստրոսի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը և բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել:

6. Ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի

կողմից: Կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

7. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

Խնդիրները, որոնք չեն քննարկվում սույն Կարգի մեջ, լուծվում են համաձայն ՀՀ սահմանադրության, համապատասխան օրենքների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնակարգերի ու կարգերի:

Հավելված

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՍՏՏՄԱՆ ՀԱՅՑ

_____ ամբիոնի վարիչ _____-ին
ամբիոնի անվանումը Ա Հ Ա
_____ ուսանող/ուհի/ _____-ից
մասնագիտություն, կուրս Ա Հ Ա

Խնդրում եմ հաստատել մագիստրոսական թեզի _____

ՄԹ-ի թեմայի անվանումը

_____ թեման և _____ դեկավար նշանակել
_____ -ին:

ԱՀԱ ստիճան, կոչում, պաշտոն,

_____ ամսաթիվ

ուսանողի ստորագրությունը և հեռախոսի համարը, էլ. հասցեն

Համաձայն եմ դեկավարելու

_____ ամսաթիվ դեկավարի _____ ԱՀԱ և
ստորագրությունը

Հավելված

_____ ամբիոնի մագիստրոսական թեզերի թեմաների
ամբիոնի անվանումը

հաստատման տեղեկագիր 20__ - 20__ ուստարի

ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ _____ ԱՄԲԻՈՆ՝ _____

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ _____

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ _____

	Թեզի վերնագիր	Ուսանող (ԱՀԱ)	Ղեկավար (ԱՀԱ)	Ղեկավարի գիտ. աստիճան, կոչում և աշխատանքի վայր
1.				
2.				
3.				
4.				

Ամբիոնի վարիչ՝ _____

ԱՀԱ

ստորագրություն

Ֆակուլտետի ղեկան՝ _____

ԱՀԱ

ստորագրություն

Հավելված

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամբիոն _____

Ամբիոնի անվանումը

ԿԱՐՕԻՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՂԵԿԱՎԱՐԻ

Ուսանող/ ԱՀԱ /	
Մասնագիտություն	
ՄԹ-ի թեմա	

1. Աշխատանքի ծավալը. էջերի քանակը՝ _____, գրաֆիկական մասը՝ _____ էջ:
2. Հետազոտության նպատակն ու խնդիրները.

3. Հետազոտության թեմայի արդիականությունը, տեսական և/կամ կիրառական նշանակությունը

4. Աշխատանքի բովանդակության համապատասխանությունը առաջադրված խնդրին (լրիվ կամ մասնակի).

թեմայով

ՄԹ-ի թեմայի անվանումը
մագիստրոսական թեզը: Խնդրում եմ Ձեր գրախոսումը ներկայացնել ոչ ուշ, քան _____:

Ամսաթիվ
Թեզի պաշտպանությունը նշանակված է _____:

Ամսաթիվ
Ամբիոնի վարիչ՝ _____ Կ.Տ. Ստորագրություն
Ամբիոնի անվանումը

Հավելված

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ուսանող _____
ԱՀԱ

Ամբիոն _____
Ամբիոնի անվանումը

ՄԹ-ի թեմայի անվանումը

Թեմայով ՄԹ-ը ներառում է _____ էջ բացատրական գրառում և _____ էջ գրաֆիկական նյութ:

Աշխատանքի գլուխները, կատարված ուսումնասիրությունները և ծավալը
ՄԹ-ի համար ներայացվող պահանջներին:
(համապատասխանում, չի համապատասխանում)

Աշխատանքի հիմնական առավելություններն ու թերությունները
1. Թեմայի համապատասխանությունը ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին, ձևակերպած հիմնախնդիրը, հետազոտության սահմանած նպատակը և խնդիրները, *արդիականությունը*, տեսական և/կամ կիրառական նշանակությունը

2. ՄԹ-ում կատարված աշխատանքի ինքնուրույնությունը, հետազոտության թեմային համապատասխան տեսական և գործնական (կիրառական) տիրույթներում նորարարական մոտեցումների և ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտությունների առկայությունը:/ հակիրճ բնութագիր/

3. ՄԹ-ի առավելությունները, որտեղ երևում են՝ քանակական ու որակական տվյալների խորը վերլուծություն, հատուկ և համապատասխան եզրա հանգումներ, ուսանողի ինքնուրույնություն, տեսական պատրաստվածության աստիճանը, արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու և որոշումներ կայացնելու հմտություն և այլն

4. Թեմայի վերլուծությունն և ամփոփումը հենվածությունը անհրաժեշտ գրականության շրջանակում կատարված առաջավոր մասնագիտկանան սկզբունքների ու մեթոդների իմացության վրա

5. Հատուկ դիտարկումներ, ցանկություններ և առաջարկություններ

Պաշտպանության թույլտվության հնարավորություն՝

Գնահատական (1-100)

Գրախոս՝ _____ / _____ /
ստորագրություն անունը, ազգանունը

Ամսաթիվ՝ «___» _____ 20__ թ.

Հավելված
ճ

ՄԹ-ի տիտղոսաթերթի օրինակ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետի _____ անվանում
[12pt, թավ]

Ամբիոն _____ [12pt, թավ]

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ [16pt, թավ]

_____ [14pt] Ուսանողի ԱՀԱ

Ներկայացված է մագիստրոսի
որակավորման հայցմանը
«.....» մասնագիտությամբ
.....մագիստրոսական
ծրագրով

Ղեկավար/գիտ. կոչում _____
[12pt] ԱԱՀ. Ստորագրություն

«Թույլատրվում է պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ [12pt]

Ստորագրություն Ամբիոնի վարիչի ԱՀԱ, գիտ. աստիճան, կոչում